Ս. ԳԷՈՐԳԵԱՆ ԴՊՐՈՑ

ԱԱՍՏՐԱԽԱՆ

Լոգեբերությունք Արարատ Լրագրոյ։

Համաձայն տնօրէնութեան Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց Տեառն Տեառն Գէորգայ Դ. ի սրահի սուրբ Եկեղեցւոյ Կատարինէ կուսի յԱստրախան քաղաքի կառուցաւ Դպրատուն մի նուիրագործութեամբ բարեպաշտ ժողովրդոց Հայոց քաղաքիս, ուրանօր ուսանին մանկունք աղքատ կարգի ժողովրդոց և հոգևորականաց, և որովհետև կանգնումն յիշեալ դպրատան տնօրինեցաւ ներկայութեամբ Նորին Սրբութեան ի 1867 ամի, վասնորոյ Հոգաբարձուքս Աստրախանայ Հայոց ծխական երկսեռի Հոգևոր Դպրոցաց և համայն Հայ հասարակութիւն քաղաքիս հոգեռանդ փափագանօք և որդիական հարազատութեամբ առ Մայր Աթոռն սուրբ Էջմիածնի և առ մեծ Գահակալ Նորին ցանկայաք զայն Դպրատուն անուանել յանուն Նորին Վեհափառութեան «Գէորգեան», առ ի յաւերժացուցանել զքաղցր յիշատակ անուան Նորին ի մէջ բնակչաց քաղաքիս և ի միտս մատաղորդոյն, ուստի յայտարարութեամբ ի 10 մայիսի տարւոյս համարաւ 101, դիմեալ առ Նորին Վեհափառութիւնն խնդրեցաք, բարեհաճել պսակել զցանկութիւն և զփափագ սրտից մերոց և Հասարակութեան, և Հայրապետական շնորհաշեղ կոնդակաւ շնորհել մեզ լուծումն անուանակոչելոյ զայն նորակառոյց Դպրատունն յանուն Նորին Սրբութեան «Գէորգեան», ի յիշատակ բարենպատակ այցելութեան Նորին յԱստրախան քաղաքի յամին 1867։ Առ այն խնդիր Հոգաբարձուացս՝ Նորին Աստուածարեալ Վեհափառութիւնն բարեհաճեցաւ Հայրապետական Կոնդակաւ յ2 յունիսի այսր ամի 103, պատուիրել կոչել զյիշատակեալ Դպրատունն յանուն քաջամարտիկ զօրականին Քրիստոսի սրբոյն Գէորգայ կոչմամբս «Սուրբ Գէորգեան Դպրոցն», Հոգաբարձութիւնս խնդութեամբ սրտի և հոգւոյ ընդունելով զյիշեալ շնորհաշեղ Կոնդակ Նորին. Սրբութեան՝ կարգաւորեաց համաձայն տնօրէնութեան Նորին, անուանելով զյիշատակեալ Դպրատունն «Սուրբ Գէորգեան Դպրոց», վասնորոյ առաքմամբ պատճէնի յիշեալ Կոնդակի ծանուցանելով զայսմանէ խմբագրատան Արարատայ խոնարհարար խնդրէ Հոգաբարձութիւնս, միջոցաւ Արարատ ամսագրոյ հրատարակել ի գիտութիւն բոլոր համազգեաց, ի լոյս ընծայելով զոյգ ընդդրութեան այսորիկ և զպատճէն Հայրապետական Կոնդակի Նորին Վեհափառութեան։

Հոգաբարձու՝ Յովսէփ Ա-ագ Խահանայ Լոռնիմիանց
Սիմեոն Պօղոսեանց
Յովհաննէս Սարգսեանց
Սարգիս Լոռելեանց։

Ի 29 Յունիս 1871 ամի
ՅԱստրախան։

ԳԻՆՈՒԳ ԾԱՌԱՑ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԱՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԾԱՑՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՑՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ, Հարազատ որդւոց Առաքելական սուրբ Եկեղեցւոյս Հայաստանեայց՝ հաւատարիմ Հոգաբարձուաց երկսեռ Դպրոցաց Հայոց Աստրախանայ Քրիստոսական ողջունիւ և Հայրապետական օրհնութեամբ ծանուցանեմք։

Ընթերցեալ զյայտարար գիր Ձեր զգրեալն ի 10 մայիսի, հասու եղաք հաւաստեաւ բարենպատակ մտադրութեանցդ, որ վասն անուանելոյ յանուն մեր զտնօրինեալն ներկայութեամբ մերով յամին 1867 զդպրատունն ի սրահի սուրբ Կատարինեայ Եկեղեցւոյ քաղաքիդ՝ զկառուցեալն արդեամբք բարեպաշտ ժողովրդոց Աստրախանայ, ո՛չ սակաւ բերկրեալ առատացոյց զմեր հոգեկան խնդութիւնն ընդ հոգեռանդ փափագ և որդիական հարազատութիւն բարեպաշտ ժողովրդոց քաղաքիդ և Ձեր իսկ բարեջան Հոգաբարձուացդ առ Մայր Աթոռն Հայաստանեայց սուրբ Էջմիածին և առ մեզ, որ ո՛չ արկանելով ի մոռացօնս, ցանկայք պահել ի միտս զյիշատակ գալստեան մերոյ և այցելութեան ի բարեճոխ քաղաքդ։ Այո՛ արդարև մխի-

թարութիւն պատճառեաց ոգւոյ մերում, որ սակս պատշաճ համարիմք պատուիրել Ձեզ՝ կոչել ըստ յիշատակեալ դպրատունն յանուն քաջամարտիկ զօրականին Քրիստոսի սրբոյն Գէորգայ կոչմամբս «Սուրբ Գէորգեան Դպրոց»։

Արդ՝ այսու Հայրապետական Կոնդակաւ օրհնելով զՀամայն բարեպաշտ ժողովուրդս և զյարգելի Հոգաբարձուսդ, զԴպրատունն ևս և զվարժապետս, զուսանող մանկունս, հայցեմք յԱմենակարող Տեառնէ, զի բարեխօսութեամբ սրբոյն Գէորգայ Զօրավարին կազդուրացուսցէ և զօրացուսցէ զամենայն աշխատաւորսդ յասպարիզի ուսումնական յառաջադիմութեան, և ընդարձակեսցէ Ձեզ Տէր Յիսուս զժամանակ բարեյաջող և խաղաղաւէտ յարդիւնաւորել օր քան զօր բարոյապէս և նիւթապէս զվարժարանն և յարատևել ի նոյն յօգուտ և ի փառս ազգի և Եկեղեցւոյ։

Ո՛ղջ լերուք և օրհնեալք յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա և ի մէնջ։ Ամէն։

(Սարգիս։)

յ2 յունիսի 1871 մ.
Ի Աղթամարայ Ռ.Ցի.
Ի Ս. Էջմիածին։

ԲԱՐԵԲԱՐՈՒՀԻ ՀԱՅ ՏԻԿՆԱՑՔ ՑԱՍՏՐԱԽԱՆ։

(Վանի ցանկալի և ոլքան կարևոր և օգտաւէտ է՝ եթէ մերազնեայ տիկնայք յամենայն տեղիս՝ բարի նախանձ և օրինակ ընդունելով Աստրախանաբնակ Հայկազուն տիկիններէն և ընկերութեամբք խնամակալութիւնս կազմելով՝ ըղձանային և ոգևորեալ փութային Ազգիս օրիորդաց Ազգ. դաստիարակութեան և ուսումնադարդ զարգացման բաղձանօք բարեբարուհիք հանդիսանալոյ՝ տարեկան բազում կամ սակաւ՝ ըստ կարեացն նուէրներ յանկուցուցանելով։ Որով անշուշտ յառաջադէմ միանգամայն և երջանիկ պիտի փայլի մեր բազմակարօտ սիրելի Հայրենիք Հայաստան՝ բարեկիրթ և ուսեալ բարի և ընտիր մայրեր ունենալով։

Արդ այս առթիւ անհրաժեշտ ևս քաղցը պարտաւորութիւն կզգամք՝ հրապարակաւ ամենագրոյս միջոցաւ գովել Աստրախանայ մերազնեայ բարեպաշտ տիկնայց առաքինասէր ջանքերը և նպատակները յօգուտ և ի բարգաւաճանս Ազգի և Եկեղեցւոյ մերոյ. և միանգամայն կը պարզեմք մեր խորին շնորհակալեաց հաւաստիքը։)

Խմբագրութեան Բարեբաղ Ամենայնոյ.

Հոգաբարձութիւն Աստրախանայ Հայոց Հոգևոր երկսեռ Դպրոցաց ընդ սմին մատուցանէ Խմբագրութեանդ զանուանական ցուցակ բարերարուհի Անդամոց Օրիորդական Դպրոցի, որք ի նպաստ ծախուց Դպրատան նուիրեալ են զտարեկան տասն ռուբլիս արծաթի, սկսեալ ի 1 ն Ապրիլի այսր ամի ց 1 ն ապրիլի առաջակայ 1872 ամի. և խնդրէ միջոցաւ Արարատ ամենագրոյ հրատարակել ի գիտութիւն բարենախանձ և ուսումնատենչ համազգայնոց։

Ի 10 ն յունիսի 1871 մ.
Յանձնարարեն։

ՑՈՒՑԱԿ

ԱՆՈՒԱՆՑ ԲԱՐԵԲԱՐՈՒՀԻ ԱՆԴԱՄՈՑ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑԻ ԱՍՏՐԱԽԱՆԱՑ։

	ռբլ.
Մարգարիտ Գէորգեան, վասն 1870 և 1871 ամաց	20
Մարգարիտ Ցարութիւնեան Բունիաթեանց	10
Ռաստիանէ Գրիգորեան Մասումեանց . .	10
Կատարինէ Յովհաննէսեան Գռանգուլեանց	10
Մագդաղինէ Ահարոնեան Գաբրիկանթեանց	10
Ելիսաննա Փիլիպոսեան Ի. ուանովեանց	